«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինտեգրված պապապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Հաստատություն՝ Կապանի թիվ 4 ՆՈՒՀ

Դաստիարակ՝ Գրիգորյան Ռուզաննա

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1

1.1 ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
1.2 ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ԳԼՈՒԽ 2

2.1 ԵՐԵԽԱՅԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

2.2 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մանկապարտեզային կյանքի շարժիչ ուժերը, որպես մանկական համայնքի կազմակերպիչներ՝ դաստիարակներն են: Մեր օրերում շատ մեծ է դաստիարակի կատարած աշխատանքը, որովհետև նա կրթում ու դաստիարակում է մի ամբողջ սերունդ, որը վաղվա ապագան է: Դաստիարակությունը չափազանց պատասխանատու գործընթաց է, որովհետև երեխային ուղղորդելու համար անհրաժեշտ է հասկանալ նրան, գիտակցելով, որ ձևավորվող մարդուկն ունի ցանկություններ, հետաքրքրություններ, նախասիրություններ: Ինչպես նշել է ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուին. (Դստիարակության առավել արդյունավետ ձևը առարկաների միավորումն է, որը մտքի արագ, մշտական ու ստեղծագործական հմտությունների ձևավորման միջոց է): Իրոք, մեզ շրջապատող աշխարհը միասնական է ու ամբողջական: Եվ այն երեխան ընկալում է հենց այդպես: ՈՒստի ուսուցման ամենարդյունավետ տեսակը՝ միավորված, ինտեգրված ամբողջական մոտեցումն է: Ինտեգրված պարապմունքների անցկացման նպատակն է.

1. Բարձրացնել ուսումնական գործունեության նկատմամբ մոտիվացիան:
2. Զարգացնել ստեղծագործական մտածողությունը:
3. Զարգացնել համագործակցային կարողությունները:
4. Բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, և ամրապնդել միջառարկայական կապերը:

Այսպիսով, հետազոտությանս թեման է՝ <<Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում>>:

Նպատակը՝ բացահայտել ինտեգրված պարապմունքների կազմակերպման դերը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում:

Խնդիրները՝ ուսունասիրել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն, կատարել համապատասխան աշխատանքներ:

1.1 ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

-Հանգուցային բառեր. ինտեգրում, ինտեգրված դաս, կրթական տեխնոլոգիաներ, դրդապատճառ, առաջատար, օժանդակ, հակասություն, միջառարկայական կապ: Աշխարհում տեղի է ունենում փոփոխություններ, որոնք պահանջում են նոր մտածելակերպ, ընկալում, համագործակցային կարողություններ, նոր հմտություններ:

Կրթական փոփոխությունների զարգացման ուղղություններն ու մոտեցումները պահանջում են մանկավարժական գործընթացի կազմակերպման նոր ձևեր և մեթոդներ, դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված՝ ինտեգրված ծրագրերի հետևալ տեսակները:

-միջառարկայական - --

բազմառարկայական ---

անդրառարկայական

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացություն, ուսուցման ժամանակ մի քանի առարկանների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս, որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորվել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝պահպանելով ասառաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն ինտեգրված դասերը ուսուցիչները այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում:

1. Երբ հայտնաբերվում է միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում:
2. Թեմայի ուսումնասիրության ժամանակ խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից
3. Այնպիսի ընդհարացված հասկացությունների, օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ:
4. Երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրերի շրջանակներից:

5.Առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացող ուսուցում իրականացնելու ժամանակ:

1.2.ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ինտեգրված դասերը ժամանակակից ուսուցման մեթոդների նորություններից մեկն են: Այս տիպի դասերը կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ:Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվու, մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

1.Ինտեգրված դասի անցկացմանն իր դրդապատճառներն ու նպատակը

2. Համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը

3.Ինտեգրման ձևը

4.Միավորվող նյութերի միջև կապերի բնույթը

5.Նյութի հաջորդականության կառուցվածքը

6.Նյութի ներկայացման միջոցները

7.Տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները

Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Այսպիսով, կրթական ծրագրերի բովանդականությունը կազմող տարբեր առարկաների իմաստն այն է, որ այդ բովանդակությունը արտացոլում է ամբողջական իրականությունը իր տարբեր կողմերով՝փոխկապակցված ձևերով, իսկ միջառարկայական կապերը լայն հնարավորություն են ստեղծում ուսուցման նկատմամբ դրսևորելու համընդհանուր մոտեցում՝ սովորողների համար, հիմք հանդիսանալով իրականության նկատմամբ միասնական հայացքների ձևավորմանը:

Գ Լ ՈՒ Խ 2

2.1 ԵՐԵԽԱՅԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՈՒսուցման գործընթացը փոխներգործություն է, որի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական հաղորդակցման ոճով, երեխաների և մանկավարժական հաղորդակցման ոճով, երեխաների և մանկավարժների փոխհարաբերություններով: Հաղորդակցման ոճը բխում է հասարակության կողմից ներկայացվող պահանջներից, կրթական համակարգի ռազմավարությունից և գերակա խնդիրներից: Հասարակության զարգացման ժողովրդական սկզբունքների հաստատման ճանապարհին զգացվեց ուսուցման նոր մոդելի անհրաժեշտությունը: Այն դարձավ ժամանակի պահանջ: Ետ մղվեցին մանկավարժական հաղորդակցման ինքնիշխան /ավտորիտալ/ և հարմարվողական /լիբերալ/ ոճերը, որոնց համապատասխանում էին ուսուցման ուսումնակարգապահական և հրահանգային մոդելները: Բնականաբար, կառուցվող ժողովրդավարական հասարակությունը պիտի նախընտրեր մանկավարժական հաղորդակցման ժողովրդավարական /դեմոկրատիա/ ոճը և, վերանայեր ուսուցման կազմակերպման եղանակը Դեմոկրատական հաղորդակցման ոճին համապատասխանում է ուսուցման անհատակողմնորոշիչ մոդելը: ՈՒսուցման նշված մոդելի նպատակն է ուսուցման ընթացքում յուրաքանչյուր երեխայի անկրկնելիության և անհատականության բացահայտումը, նրա անձի զարգացումը: Մոդելի հիմքում ընկած է Շ. Ա. Ամոնաշվիլու կողմից նկարագրված մարդասիրական, անձնային մոտեցումը երեխային, հավատն ու վստահությունը նրա ներքին ուժերի հանդեպ: Մոտեցման գաղափարն է.<<Երեխան կարող է սովորել, եթե ուզում է>>, հետևաբար ամիրաժեշտ է խրախուսել սովորելու ցանկությունը և պատշաճ գնահատել կարողությունները: ՈՒսուցման անհատակողմնորոշիչ մոդելի հիման վրա կառուցվում է մանկավարժական տեխնոլոգիա, որի հիմնական ուղղություններն են.

-Երեխայի ակտիվ մասնակցության ապահովումը ուսումնառության գործընթացին՝ ուսուցման փոխգործուն մեթոդների կիրառման միջոցով:

-Երեխաների հետ երկխոսության և համագործակցության հաստատումը:

-Փոխըմբռման մթնոլորտի ստեղծումը, որի արդյունքում ուսուցումը կառուցվում է ոչ թե ցուցադրումների և բացատրությունների, այլ երեխայի նախասիրությունների և հետաքրքրությունների ուսումնասիրության հաշվառման հիման վրա:

-ՈՒսուցման զարգացնող ուղղվածության ապահովումը երեխաների ինքնուրույն փորձարարական գործունեության կազմակերպմամբ:

-ՈՒսուցման ընթացքում երեխայի ինքնակառավարման սկզբունքների հաստատումը:

-ՈՒսուցման իրականացումը համատեղ գործունեության ընթացքում, և երեխան, և մանկավարժը, նույն հարթության մեջ են և գործունեության սուբյեկտների դերում: Մանկավարժը խորհրդատու է, օգնական, ավագ ընկեր, այլ ոչ՛ թե թելադրող:

-Ուսուցման ընթացքում հնարավոր է ուսուցման խնդիրների առաջադրման և լուծման տարբեր եղանակներ, որոնք դիդակտիկայում հայտնի են որպես ուսուցման տեսակներ:

Ժամանակակից դիդակտիկան մշակում է ուսուցման նորանոր տեսակներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել 3 խմբի՝

1.ՈՒղղակի ուսուցման

2.Պրոբլեմային/խնդրահարույց/ ուսուցման

3.Միջնորդված ուսուցման

Դրանք կարող են օգտագործվել նաև համատեղ՝որևէ տեսակի գերակայությամբ: ՈՒսուցման տեսակի ընտրությունը պայմանավորված է դիդակտիկ խնդրի բովանդակությամբ: 1. ՈՒղղակի/ավանդական /ուսուցման ընթացքում դիդակտիկ խնդիրը երեխաներին առաջադրում է մանկավարժը՝ բացատրացուցադրական եղանակներով, որի արդյունքում երեխաների կողմից ձեռք է բերվում /պատրաստի գիտելիքներ և հմտություններ/: 2. Պրոբլեմային ուսուցման հիմքում ընկած է երեխայի ուսումնահիմացական-որոնողական գործունեությունը: Նրան չեն փոխանցում պատրաստի գիտելիքներ, այլ առաջարկվում են

պրոբլեմային տարբեր իրադրություններ: Արդյունքում՝երեխան ինքն է փնտրում, գտնում, ինքնուրույն ձեռք բերում գիտելիքներ և կարողություններ:

3.Միջնորդված ուսուցման էությունը զարգացող միջավայրի կառուցման մեջ է, որը դառնում է ուսուցման միջնորդ: Զարգացնող միջավայրն իր մեջ պարունակում է դիդակտիկ նյութեր, ուսուցանող հետաքրքրաշարժ գրքեր, տեսաֆիլմեր և այլ միջոցներ: Միջնորդված ուսուցման հիմնական նշանաբանն է՝ <<Սովորիր ինքդ, սովորեցրու՝ ընկերոջդ>>: Այսպիսով ուսուցման տեսակների զուգորդումը անհատական կողմնորոշիչ հաղորդակցման պայմաններում ձևավորվում է և կյանքի է կոչվում ժամանակակից դիդակտիկայի հիմնական կարգախոսը.այն է՝ <<Սովորեցնե՝լ, սովորել>>:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

ՈՒսուցման գործընթացը իրականանացվում է տարբեր մեթոդների օգնությամբ: Մեթոդը նպատակին հասնելու միջոց է՝ ուղի: Դիդակտիկ մեթոդը ուսուցման ընթացքում հաջորդաբար կիրառվող միջոցների համակարգ է՝ ուղղված դիդակտիկ խնդրի լուծմանը: ՈՒսուցման մեթոդը բաղկացած է ուսուցման հնարքներից, որոնք միտված է ավելի նեղ ուսումնական խնդիրների լուծմանը: Մեթոդն արդյունավետ է երբ մեթոդին կից օգտագործվող հնարքները բազմազան են: ՈՒսուցման մոթոդների ավանդական դասակարգումը հիմնված է գիտելիքների ձեռք բերման աղբյուրների վրա,որոնց համաձայն մեթոդները բաժանվում են 3 խմբի.

1.խոսքային /գիտելիքի աղբյուրը խոսքն է/

2.դիտողական/գիտելիքը ձեռք է բերվում դիտողականության դիտարկման շնորհիվ/

3.գործնական/գիտելիքը պրակտիկ փորձի արդյունքն է/

Ներկայումս նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են գտել ուսուցման ժամանակակից մեթոդոնները՝խաղային, գործնական,ակտիվ ուսուցման մեթոդները: Վերջիններս հայտն են որպես ինտեռակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Ինտեռակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի երկխոսության մեջ գտնվել ինչ որ մեկի կամ համակարգչի հետ: Այսինքն, ինտեռակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով:

inter-փոխադարձ

akt-գործողություն

Ակտիվ ուսուցման մեթոդները համահունչ են պրոբլեմային և միջնորդված ուսուցման սկզբունքներին և ուղղված են երեխայի որոնողական և իմացական գործունեության ձևավորմանը, ազատ մտածելու, և համարձակ կարծիք հայտնելու կարողությունների և տարակարծության զարգացմանը, իմացության գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Դրանք խմբային մտավոր աշխատանքի եղանակներն են՝ուղղված համատեղ մտորումների և որոնումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը: Այսօր լայն տարածում է ստացել, օրինակ՝ <<Մտատարափի կամ մտագրային գրոհի>>մեթոդը, որը հնարավորություն է տալիս վերհանելու ուսուցանվող խնդրի շուրջ երեխաների բոլոր հնարավոր՝ նույնիսկ ամենաանհավանական կարծիքներն ու մտքերը: Հետաքրքիր է <<խճանկարի>> մեթոդը, որը նունպես խմբային ուսուցման միջոց է: <<Խճանկարի կամ Ջիգսոյի>> մեթոդը նախադպրոցական տարիքում կարելի է կիրառել հետևալ հաջորդականությամբ: ԵՎ ուսուցանվող նյութը և, երեխաները բաժանվում են հավասար մասերի /խմբերի/: Խմբի յուրաքանչյուր անդամ ստանում է հանձնարարության իր մասը, որից հետո երեխաները դառնում են<<փորձագետներ>> և խմբավորում հանձնարարությունների նույնությամբ: Նյութի իրենց մասը յուրացնելուց, հետո <<փորձագետները>> վերադառնում են իրենց հիմնական խումբ և, յուրաքանչյուրը փորձում է բարձրաձայն սովորեցնել, ընկերներին բացատրելով ուսունասիրված նյութը: Ծավալվում է ընդհանուր քննարկում, հաճախ բանավեճ՝ հագեցած տարակարծիք մեկնաբանություններով:

Բավական արդյունավետ մեթոդ է <<Նկարներով ընթերցանության կամ ուղղորդված ընթերցանության>> մեթոդը, որը սովորեցնում է երեխաներին գուշակել հեքիաթի բովանդակությունը նկարների օգնությամբ, վերնագրել այն և որոշել հեքիաթի հերոսներին և խորհուրդը: Հեքիաթը սկզբից երեխաներին <<ընթերցվում է>> նկարների օգնությամբ, ընդ որում գաղտնիք է հեքիաթի վերնագիրը, որն անհրաժեշտ է գուշակել նկարներով ընթերցումից հետո: ՈՒուցման գործընթացը մանկապարտեզում կազմակերպվում է 3 հիմնական ձևերով: ՈՒսուցման կազմակերպման դեռևս ամենատարածված ձևը պարապմունքն է: Պարպմունքների կազմակերպումը մեծ վարպետություն է պահանջում մանկավարժից: Այսօր առավել արժեքավոր են համարվում համալիր բնույթի պարապմունքները, որոնց ընթացքում դիդակտիկ խնդիրները լուծվում են երեխաներին ներգրավվելով գործունեության տարբեր ձևերի մեջ: Մշակվում են նաև ինտեգրված պարապմունքներ:

Գ Ո Ր Ծ Ն Կ Ա Ն Մ Ա Ս

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ և հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությոընը, անմիջականությունը, երևակայությունը և զարմանալու, աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալու սովորույթը: Բոլոր երեխաները այս կամ այն չափով օժտված են այս հատկանիշներով: Այդ հատկությունները կարևոր դեր են խաղում հատկապես սովորելու գործընթացում: Այս նպատակին հասնելու ուղին մանկապարտեզում ուսումնառությունը ինտեգրված պապապմունքների միջոցով կազմակերպելն է: Ինտեգրված պարապմունքները ժամանակակից մեթոդիկայի նորություններից մեկն է: Այդպիսի պարապմումքների միջոցով արտահայտվում են միջառարկայական կապերը: Միջառարկայական կապերի մասին Յ. Ա. Կոմենսկին իր <<Մեծ դիդակտիկա>> աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. <<Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով, նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում,այլ նաև ցույց տալ թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել փոխկապակցվածության մեջ>>: Այն կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված պարապմունքները բազմակողմանի գիտելիքներ են ապահովում, հետաքրքիր և բովանդակալից են դարձնում ուսումնական գործընթացը: Այն իրականացնելու համար պահանջվում է նախապատրաստական լուրջ ջանքեր: <<Ինտեգրում>> բառը նկատի ունենք տարբեր ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն՝փոխադարձ իրար լրացնող և, իմաստով և ձևով: Այն չափազանց գրավիչ ձև է երեխաների համար՝ երեխաներին տալիս են լիարժեք պատկերացում նյութի վերբերյալ: Դա երկու պարապմունքի խաչմերուկն է, որին հետևում է վերելքը, ապա գագաթը՝նպատակային պարապմունքը: Ինտեգրված պարապմունքը սովորաբար նախապես պլանավորվում է: Դա անհրաժեշտ է և համապատասխանում է ուսումնական ծրագրին: Հաճախ դրանք պարապմունքներ են՝ ինտեգրված ըստ թեմայի ընդհանրացումների և գիտելիքների ամրապնդման:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՁԵՎ

Սկզբից ընտրում ենք թեման, որոնք դառնում են ԳՈՒՍ-ի բաժնի հարցերը

Սահմանում ենք նպատակները.

-Կրթական/իմացություն

-Զարգացնող/կարողություն

-Դաստիարակչական/սոցիալական հմտություն

ԳՈՒՍ -ի մեթոդով պարզում ենք, թե ինչ գիտեն երեխաները տվյալ թեմայի վերաբերյալ

ԳԻՏԵՄ	ՈՒԶՈՒՄ ԵՄ ԻՄԱՆԱԼ	ՍՈՎՈՐԵՑԻՆՔ

-Թեմայի վերաբերյալ նյութերի հավաքում

-Անհրաժեշտ գրականության ձեռք բերում

-Դիդակտիկ պարագաների ստեղծում

ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՄ ՄԻՋԻՆ ԽՄԲԻ ԻՄ ԱՆՑԿԱՑՐԱԾ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԸ՝ <<ՈՍԿԵ ԱՇՈՒՆ>> ԹԵՄԱՅՈՎ

Թեման՝ <<ՈՍԿԵ ԱՇՈՒՆ>>

Տեսակը՝ Ինտեգրված պարապմունք՝ խոսք+նկարչություն

Նպատակը՝

-Սովորեցնել գեղեցիկ խոսքով վերարատադրել աշնանային գույների համադրությունը, ներկայացնել ծառերի, տերևների, հաստ ու բարակ ճյուղերի նկարագրությունը:

-Արթնացնել նրանց վառ, գունեղ նկարների ուրախության, բերկրանքի զգացումներ ապրելու և խոսքով արտահայտելու կարողությունը:

-Զարգացնել երեխաների մեջ կերպարվեստային ստեղծագործությունների գեղագիտական ընկալումը և խոսքով արտահայտումը, սովորեցնել, նկատել աշնան գունային առանձնահատկությունները, բանաստեղծական խոսքի մեղեդայնությունը, պատկերավորությունը:

Անհրաժեշտ նյութեր՝

-Գեղանկարիչների ստեղծագործությունների վերատպություններ

-Ջրաներկ, վրձիններ, թուղթ, ջուր ՝ ապակե ջրամանով, թաց և չոր անձեռոցիկներ

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Խթանման փուլ /3-5 րոպե/

Առաջադրել հանելուկ /Մ.Կորյուն/

Ձեռքեր չունի,

Ներկեր չունի,

Դաշտ է ներկում,

Հազար գույնի: /Աշուն/

Հանելուկի գուշակումից հետո երեխաներրին հարցնել, թե տարվա ո՞ր եղանակն է այժմ: Ծառերի վրա ի՞նչ գույնի տերևներ կան, որ գույներն են առավել շատ:

Իմաստի ընկալումը

Երխաների պատասխաններից հետո ցուցադրել հայ մեծանուն գեղանկարիչ Գ. Բաշինջաղյանի <<Աշուն>>, ռուս բնանկարիչ Լևիտանի <<Ոսկե աշուն>> ստեղծագործությունների վերատպությունները:

Առաջադրել երեխաներին հարցեր.

-Տարվա ո՞ր եղանակն է արտացոլված նկարներում: Ինչպիսի՞ գույներ են օգտագործել նկարիչները աշնանային գուներանգը հաղորդելու համար: Ծառերի վրա ի՞նչ գույնի տերևներ կան: Ո՞ր գույներն են առավել շատ: Այդ գույներն անվանում են տաք, թե՞ սառը: Պատասխանները լսելուց հետո ընդհանրացնել և արտասանել Հովհ.Թումանյանի <<Աշուն>> բանաստեղծությունը և երեխաների ուշադրությունը հրավիրել հեղինակի կողմից վերարտադրված աշնանային վառ պատկերների նկարագրության վրա:
Պ. Չայկովսկու <<Տարվա եղանակներ>> շարքից, <<Աշուն>> ստեղծագործության մեղմ հնչյունների ներքո երեխաները սկսում են նկարել: Հիշեցնել երեխաներին, թե ծառը նկարելիս ինչի՞ց պետք է սկսել՝ բուն, ճյուղեր, տերևներ:

Դիտել բոլոր աշխատանքները, քննարկել և ընդգծել նկարներում պատկերված աշնանային կոլորիտի գեղեցկությունը

Կշռադատման փուլ

1.Ինչի՞ մասին էինք զրուցում

2.Ի՞նչ բառերով նկարագրեցինք աշունը

3.Ի՞նչ նվիրեց մեզ աշունը

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Այսպիսով նախադպրոցական կրթության մեթոդական նորացման կարևոր ուղղություններից է ինտեգրված պարապմունքների անցկացումը մանկապարտեզի մանկավարժական գործընթացում: ՈՒսումնասիրելով միջառարկայական կապերի իրականացումը ուսուցման գործընթացում եկա հետևալ եզրահանգման.

1.Ինտեգրված պարապմունքը ունի շատ մեծ կարևորություն: Այն զարգացնող բնույթ ունի:

2.Հնարավորություն ընձեռվեց լրացնել երեխաների գիտելիքների պակասը՝ նկարչությունից ու խոսքի զարգացումից;

3.Հզոր խթան հանդիսացավ երեխաների հոգեկան գործունեության մեջ: Այսիքն՝ երեխաները վերլուծեցին, համեմատեցին, որոնեցին երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը:

4.Վերացավ հոգնածությունը, ձանձրույթը և երեխաների մոտ առաջացավ աշխուժություն, հետաքրքրություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

-Հ.Միտոյան, Լ.Սմբատյան, Լ.Սարգսյան, ՈՒսումնամետոդական ձեռնարկ <<Խոսքի զաւգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում>>, 2013թ.

-Մանկապարտեզի միջն խմբի կրթական համալիր ծրագիր /4-5 տարեկան/

-Հ.Միտոյան, Լ.Սմբատյան <<ՈՒսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>, 2010թ.

- Լ.Սմբատյան <<Տոնական ղողանջներ>>2011թ.

-Ս.Մարության, Ա.Դալաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն. ուսումնական ձեռնարկ>> 2005թ.

-Նախաշավիղ թիվ՝ 5-6, 2006թ.